ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

10 դեկտեմբերի չորեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

172
(3203)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉ Է ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵԼ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՓՈԽՄԱՐԶՊԵՏԸ

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայողը չսպասեց՝ համակարգում բոլորելու աշխատանքի 30-ամյակը. նա մեկ տարի շուտ համակարգից դուրս եկավ ու դարձավ մարզպետի խորհրդական:

Խոսքը սեպտեմբեր ամսին Արմավիրի մարզպետի խորհրդական նշանակված Արամ Գրիգորյանի մասին է:

Ի՞նչ պաշտոն ուներ Արամ Գրիգորյանը մինչեւ խորհրդական դառնալը

53-ամյա Արամ Գրիգորյանը 1994-1995 թվականներին աշխատել է Արմավիր քաղաքի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնում որպես վարպետ, ապա վարպետից կտրուկ դարձել էր ԱԱԾ աշխատակից՝1995-2024 թվականներին ծառայելով Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմիններում:

Կոչումով պահեստազորի փոխգնդապետը 2024-2025 թվականներին աշխատել է ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանում՝ որպես համայնքի ղեկավարի օգնական, ապա 2025 թվականի ապրիլի 2-ից մինչեւ 2025 թվականի սեպտեմբերի 12-ը աշխատել է ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանում՝ որպես համայնքի ղեկավարի խորհրդական: 15.09.2025 թվականին ՀՀ Արմավիրի մարզպետի որոշմամբ նա նշանակվել է ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական:

Ի՞նչ ունեցվածք ունի փոխմարզպետը

Արամ Գրիգորյանը նախկինում հայտարարագիր չի ներկայացրել. միայն 2025 թվականի հոկտեմբերին նա լրացրել է պաշտոնը ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի եւ եկամուտների հայտարարագիր:

Մարզպետի խորհրդական դառնալուց մեկ ամիս առաջ, երբ Գրիգորյանը Մեծամոր համայնքի ղեկավարի խորհրդականն էր, ձեռք է բերել նոր անհատական բնակելի տուն:

Մինչ այդ Գրիգորյանն ունեցել է եւս 2 անշարժ գույք՝2022 թվականին ձեռք բերված «Հասարակական նշանակության շինություն» եւ 1990 թվականին ձեռք բերված բնակարան Արմավիր համայնքում:

Արամ Գրիգորյանը 2019 թվականին ձեռք է բերել Toyota մակնիշի մեքենա:

Նրա բանկային հաշիվների մնացորդը կազմել է 3 մլն 541 հազար դրամ, 4,2 մլն դրամ հազմել են կանխիկ դրամական միջոցները:

Հաշվետու ժամանակահատվածի եկամուտները կազմել են 11 մլն 320 հազար դրամ, որից 1 մլն 450 հազար դրամը «այլ եկամուտ» է ԱԱԾ-ից, 1 մլն 440 հազար դրամը վարձակալության դիմաց ստացած եկամուտ է: 3 մլն 756 հազար դրամը Մեծամորի համայնքապետի աշխատակազմից է ստացված, իսկ 673 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է «Էներգոնորոգգարանտ»-ից:



«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՔՊ-ի 2026 թվականի խորհրդարանական ընտրությունների նախընտրական ցուցակում է ընդգրկվել նաեւ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեի նորանշանակ նախագահ Արամազդ Ղալամքարյանը: Մենք տեղեկացանք, որ Ղալամքարյանն այժմ բավականին ջերմ հարաբերություններ ունի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ ու որոշել է խորհրդարանական ընտրություններում ՔՊ-ի հետ լինել: Հիշեցնենք, որ Ղալամքարյանը «Հայ ազգային կոնգրես»-ի վարչության նախկին անդամ էր եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի թիմի կարկառուն անդամ: Նա այս տարվա՝2025 թվականի սեպտեմբերին Փաշինյանի որոշմամբ նշանակվեց Ջրային կոմիտեի նախագահի պաշտոնում: 2007 թվականից սկսած Ղալամքարյանը ՀԱԿ-ի ակտիվիստներից է եղել՝Կոնգրեսի ակտիվ պայքարողների շարքում: Նիկոլ Փաշինյանի իշխանության գալուց որոշ ժամամակ անց Ղալամքարյանը հեռացել է ՀԱԿ-ի շարքերից, սկսել է քննադատել Կոնգրեսի առաջնորդների վարած քաղաքականությունը: Բավականին երկար տարիներ լինելով հավատարիմ (ՀԱԿ) կուսակցական՝դրանով հանդերձ նա այս տարվա հունիսին մի սկանդալային գրառում էր արել «Ֆեյսբուք»-ում՝նշելով, թե Ղարաբաղյան շարժումը «ԿԳԲ-ի նախաձեռնածն» է, իսկ Տեր-Պետրոսյանը «ԿԳԲ-ի ագենտ» է:

Շարունակությունը եւ մանրամասները՝ ArmLur.am կայքում:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Քննչական կոմիտեն դատարան է դիմել՝Արագածոտնի թեմի առաջնորդարանի 60-ամյա հաշվապահ Նաիրա Ալավերդյանի կալանքը երկարաձգելու միջնորդությամբ: Առաջիկայում լրանում են նաեւ Արագածոտնի թեմի առաջնորդ Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանի, Արագածոտնի թեմի դիվանապետ Տեր Գարեգին քահանա Արսենյանի կալանքի ժամկետները, եւ չի բացառվում՝ նախաքննական մարմինը կամ քրեական վարույթով նախաքննության ավարտ հայտարարի ու գործը դատարան ուղարկի, կամ էլի կալանքի ժամկետները երկարաձգի: Հիշեցնենք, որ իրավապահները հոկտեմբերի 15-ի վաղ առավոտյան խուզարկություն էին իրականացրել Արագածոտնի թեմի առաջնորդ Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանի տանը, ապա բերման ենթարկել նրան: Սրբազանից բացի բերման էին ենթարկվել նաեւ Արագածոտնի թեմի 12 քահանաներ՝ Փառեն քահանա Առաքելյանը, Հայկ քահանա Քոչարյանը, Մկրտիչ քահանա Երանյանը, Մանուկ քահանա Ջեյնալյանը, Ղեւոնդ քահանա Գափոյանը, Հայկ քահանա Սահակյանը, Սարգիս քահանա Սարգսյանը, Գարեգին քահանա Արսենյանը, Նարեկ քահանա Սարգսյանը, Օշին քահանա Հայրապետյանը, Վրթանես քահանա Բաղալյանը, Համբարձում քահանա Դանիելյանը, Արագածոտնի թեմի հաշվապահը, գանձապահը եւ գործավարը:

«Ժողովուրդ» օրաթերթի լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ ՔՊ կուսակցության առաջնորդ Նիկոլ Փաշինյանը որոշել է ՔՊ վարչության առաջիկա նիստերում հրավիրել ՔՊ-ի 2026 թվականի խորհրդարանական ընտրությունների նախընտրական ցուցակի հավակնորդներին եւ «հարցաքննել»: Նախօրեին կայացած ՔՊ վարչության նիստը գրեթե ամբողջությամբ նվիրված է եղել 2026 թվականի նախընտրական ցուցակում առաջադրված թեկնածուներին: ՔՊ վարչության 20 հոգանոց ցուցակի հավակնորդներին «հարցաքննել» են: ՔՊ-ական մեր աղբյուրը պատմեց. «Կապ չունի՝առաջադրվողը ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր է այժմ, թե ոչ. նա պետք է պատասխանի Նիկոլ Փաշինյանի ու վարչության անդամների հարցերին, ներկայացնի ինքնակենսագրական ու բացատրի, թե ինչու է առաջադրվել, ինչ նպատակով, ու ամենակարեւորը՝ինչ վարկանիշ ունի»: Նախօրեին ԱԺ ՔՊ խմբակցության մի քանի կին պատգամավոր եւս ամբիոնից ներկայացրել են իրենց, խոսել՝իրենց ընտրվելու դեպքում անելիքների մասին: Նրանց թվում են եղել ՔՊ-ական պատգամավորներ Սոնա Ղազարյանը, Թագուհի Ղազարյանը, Հռիփսիմե Հունանյանը, Հռիփսիմե Գրիգորյանը, Մարիամ Պողոսյանը, Տաթեւիկ Գասպարյանը, Էսթեր Այվազյանն ու Լիլիթ Ստեփանյանը: Այժմյան 383 հոգանոց ՔՊ ցուցակը պետք է մոտ 200 դառնա՝ ԿԸՀ ներկայացվելու համար: Իսկ թե ովքեր պետք է առաջնորդեն եւ լինեն առաջին տասնյակում կամ քսանյակում, կպարզվի մարտին կայանալիք փրայմերիզի ժամանակ: ՔՊ պատգամավորները պետք է ձայներ հավաքեն քաղաքացիներից՝տուն-տուն մտնելով:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ՝ ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԵՏ

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒՄ

«Ժողովուրդի հարցերը» հաղորդման շրջանակում «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանի հետ: Զրույցը վերաբերել է քաղաքականության մեջ նրա առաջին քայլերին, հեղափոխության մեջ ունեցած դերակատարությանը, զբաղեցրած պաշտոններին եւ մի շարք այլ հարցերի:

-Պարոն Հայրապետյան, Դուք 2018 թվականի հեղափոխության պլանը մշակող գլխավոր դեմքերից մեկն էիք: Շեղումներ եղե՞լ են այն պլանից, որը գծված էր՝ շարժումը հասցնելու մինչեւ հեղափոխություն:

-Շատ գերագնահատված է ասել, թե հեղափոխության պլանը ես եմ գծել: Մեր քաղաքական թիմը պարզապես որոշում էր կայացրել, որ պետք է արձագանքենք Սերժ Սարգսյանի՝ արդեն վարչապետի պաշտոնով վերարտադրվելու գործընթացին, եւ որոշեցինք արտահայտել մեր քաղաքական դիրքորոշումը: Կայացվեց թիմային որոշում՝ գործընթաց սկսելու մասին: Ես ներգրավված եմ եղել քայլերի իրականացման մեթոդաբանության մեջ՝ տարբեր ակցիաների ճարտարապետությունը մշակելու, քայլերի հաջորդականությունը կազմակերպելու համատեքստում: Կարող եմ ասել, որ այդ ժամանակ կիրառված տեխնոլոգիաներից միայն մի քանիսն են ամբողջությամբ իմ կողմից առաջարկված եղել:

Պետք է նշեմ, որ գործընթացը մշտապես դինամիկ էր, եւ մարտավարական բազմաթիվ քայլեր փոխվում էին ընթացքի մեջ: Օրինակ՝ ապակենտրոն շարժման գաղափարը ծնվեց միայն այն բանից հետո, երբ Գյումրիից դեպի Երեւան ոտքով քայլերթ կազմակերպեցինք եւ, ըստ էության, կենտրոնացրինք ուժերը Ֆրանսիայի հրապարակում: Այդ մեթոդը ընտրվեց մեր քաղհասարակության գործընկերների կողմից՝ օպերայի ստորգետնյա ավտոկայանատեղիում կայացած քննարկման ընթացքում: Այդպես ծնվեցին բազմաթիվ նոր մոտեցումներ՝ ավտոմեքենաների ազդանշաններից մինչեւ այլ նորարարական քայլեր:

Ես դեռ 2018-ին ասում էի, որ հեղափոխության ընթացքում կիրառված շատ գաղափարներ ծնվել են հենց ընթացքի մեջ: Իմ կողմից ներկայացվածը ընդամենը մի քանի մեթոդաբանական առաջարկներ էին:

-Պարոն Հայրապետյան, այդ օրերին պատկերացնո՞ւմ էիք, որ փողոցներ փակելով, վրաններում գիշերելով իսկապես կհասնեիք մինչեւ այս օրերի ձեր զբաղեցրած պաշտոնին:

-Ո՛չ: Եթե անկեղծ, պատկերացումները հակառակն էին՝ ավելի բացասական, ավելի ռիսկային: Խոսքը գնում էր հնարավոր ազատազրկման, քաղաքական հետապնդումների եւ այլ ճնշումների մասին:

Երբ մարդ սկսում է նման գործընթաց, հիմքում դրված է գաղափարը: Ապրիորի ինքդ քեզ համար չես էլ քննարկում իշխանության, պաշտոնի կամ անձնական շահի մասին: Գաղափարն է առաջնորդում:

Իհարկե, անհանգստություններ կային: Չեմ ասի՝ վախեր, որովհետեւ վախը կարող էր կանգնեցնել վճռական քայլերի ճանապարհին: Բայց տագնապ կար, քանի որ այդ ընթացքում իմ ընկերները ստանում էին զանգեր իրավապահ համակարգից, ճնշումների էին ենթարկվում, որպեսզի ինձ հետ պահեին շարժման կազմակերպումից:

Հարցազրույցի շարունակությունը «Ժողովուրդ» օրաթերթի վաղվա՝ 3204 համարում:

Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԸ ՀՐԱՎԻՐՎԵԼ Է ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչ, ԱԺ պատգամավոր Իշխան Սաղաթելյանը երեկ ՀՀ քննչական կոմիտեում հարցաքննվել է «Սրբազան պայքարի» գործի շրջանակում: Այս մասին նա հայտնել է տեսանյութով:

«Այսօր ինձ հրավիրել էին Քննչական կոմիտե՝ Պետության սահմանադրական կարգի հիմունքների, պետության դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչություն՝ հարցաքննության: Ինձ հրավիրել էին Քննչական կոմիտե՝ «Բագրատ Սրբազանի եւ 17 արդարների գործի» շրջանակներում: Այդ գործից կա անջատված մաս եւ տեղի է ունենում, այսպես կոչված, լայնածավալ քննություն»,- ասաց Սաղաթելյանը:

Նա նշեց, որ հրաժարվել է որեւէ ցուցմունք կամ բացատրություն տալ. «Հայտարարել եմ՝ դա քաղաքական գործ է, իրավական որեւէ պրոցես տեղի չի ունենում, դա ընդամենը քաղաքական պատվերի շրջանակներում հետապնդումներ են, եւ ես հրաժարվում եմ որեւէ բացատրություն տալուց: Երբ որ այս գործի շրջանակներում գլխավոր դատախազը գտնվում էր Ազգային ժողովում իմ գործընկեր Արթուր Սարգսյանին անձեռնմխելիությունից զրկելու եւ կալանքի տանելու հարցով, ՔՊական պատգամավորները ինչպիսի՜ մեծ ջանքերով եւ կրքով պահանջում էին՝ բա ինչո՞ւ մյուս երկու պատգամավորներին՝ Գառնիկ Դանիելյանին եւ Իշխան Սահաթելյանին, անձեռնմխելիությունից չեք զրկում:

Նշեմ, որ մենք անհանգստության որեւէ պատճառ չունենք՝ պարզ պատճառաբանությամբ, սա իրավական որեւէ պրոցեսի հետ կապ չունի, քաղաքական պատվեր է եւ փորձելու են այս շրջանակում ինչ-որ նոր գործ կարելու կամ նոր մարդկանց մեղադրանք առաջադրելու», - ասել է պատգամավորը՝ հորդորելով չանհանգստանալ եւ ամուր մնալ:

Ո՞Վ Է ՅՈԹ ՎԵՐՔՈՒՄ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՑԱԾ ՏԵՐ ՄԿՐՏԻՉԸ

Դեկտեմբերի 7-ին Գյումրու Սուրբ Աստվածածին Մայր Եկեղեցում՝ Յոթ Վերքում, Նիկոլ Փաշինյանը եւ իշխանության թեւի մի շարք ներկայացուցիչներ պատարագի են մասնակցել: Յոթ վերքում պատարագին ներկա էր նաեւ ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը:

Ինչպես վաղօրոք էինք հայտնել՝ Շիրակի թեմի բոլոր քահանաները հրաժարվել էին Նիկոլ Փաշինյանի օրակարգով պատարագ մատուցելուց, ուստի անհրաժեշտություն կար շրջիկ քահանայի, որն էլ պատարագին կշրջանցեր Վեհափառ Հայրապետի անունը:

Երկար փնտրտուքից հետո միայն դեկտեմբերի 7-ին հայտնի դարձավ, որ այդ հոգեւորականը Տեր Մկրտիչ քահանա Մուշաղյանն է՝ Արմավիրի թեմից:

Նշենք, որ Տեր Մկրտիչը Վաղարշապատի համայնքային ընտրությունների քարոզարշավի հավաքին հոգեւոր իր առաջնորդությունն էր ցուցաբերում: Ուսումնասիրելով Տեր Մկրտիչի ֆեյսբուքյան էջը՝ կարող ենք ասել, որ նա հաշտ ու համակարծիք էր Վեհափառի եւ նրա որոշումների հետ, ինչպես նաեւ ընդունում էր Վեհափառի հայրապետական օրհնությունը:

Յոթ վերքում պատարագ մատուցելիս՝ Տեր Մկրտիչը զեղչեց՝ չհնչեցրեց Վեհափառ Հայրապետի անունը եւ ապա,առանց որեւէ մեկի հետ խոսելու, շփվելու գլխիկոր հեռացավ եկեղեցուց:

Հիշեցնենք, որ եկեղեցու կանոնների համաձայն՝խիստ մերժելի է պատարագին Վեհափառ Հայրապետի անունը զեղչելը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻ 3-ՐԴ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՅՑԸ՝ Վ. ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻ ԴԵՄ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը երրորդ դատական հայցն է ներկայացրել «Իմ-նեմնիմի» փոդքասթի հաղորդավար, այժմ կալանքի տակ գտնվող Վազգեն Սաղաթելյանի դեմ:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ Ալեն Սիմոնյանը պահանջել է Վազգեն Սաղաթելյանին պարտավորեցնել Ալեն Սիմոնյանից հրապարակայնորեն ներողություն խնդրել հետեւյալ ձեւով՝

տեղադրել հայտարարություն «Ֆեյսբուք» սոցիալական կայքի իր անձնական էջում՝ բոլորի համար հասանելի եւ տեսանելի եղանակով առնվազն հինգ աշխատանքային օր ժամկետով,

կամ տեղադրել հայտարարություն առնվազն հինգ հազար տպաքանակ ունեցող տպագիր մամուլում, եւ հայտարարության վերնագիրը շարադրել հետեւյալ բովանդակությամբ՝ «Ես՝ Վազգեն Արմենի Սաղաթելյանս, ներողություն եմ խնդրում Ալեն Սիմոնյանից»:

Ըստ դատական պահանջի՝ Սաղաթելյանը պետք է բովանդակությունն այսպես շարադրի. «09.11.2025.-ին «Յութուբ» կայքով ուղիղ եթեր հեռարձակվող «LIVE. 3-րդ նախագահի հետ մեր թողարկման, դրա արձագանքների եւ հիստերիկ նոպաների մասին «Իմ-նեմնիմի # 223» վերնագրով փոդքաթի ժամանակ կատարել եմ արտահայտություններ պարոն Սիմոնյանի վերաբերյալ: Հայտնում եմ, որ իմ կողմից կատարված արտահայտություններն իրենց մեջ պարունակում են վիրավորական արտահայտություններ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի վերաբերյալ, ինչի համար ներողություն եմ խնդրում պարոն Սիմոնյանից»:

ArmLur.am-ին հայտնի դարձավ նաեւ, որ Սիմոնյանը նաեւ գումարի պահանջ է ներկայացրել՝ բռնագանձել 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ՝ որպես տեսանյութի մեջ պարունակվող վիրավորանքի համար նախատեսված փոխհատուցում, բռնագանձել ընդհանուր 410 000 (չորս հարյուր տասը հազար) ՀՀ դրամ դատական ծախսերի հատուցում, որից 360 000 (երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ փաստաբանի վարձատրության գումար, 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ պետական տուրքի գումար:

Նոյեմբերի 25-ին հայցն ընդունվել է վարույթ: Այդ օրը դատական հայց է ներկայացվել Վազգեն Սաղաթելյանի դեմ՝ նրանից պահանջելով մոտ 2,5 միլիոն դրամ: Սաղաթելյանի դեմ առաջին դատական հայցը ներկայացվել էր օգոստոսին՝ նույն հաղորդման ժամանակ Ալեն Սիմոնյանի անձնական կյանքի մասին տեղեկություններ հրապարակելու համար: Վազգեն Սաղաթելյանից պահանջվել էր կրկին հերքում եւ երկու միլիոն դրամ:

Հավելենք, որ նոյեմբերի 13-ից Վազգեն Սաղաթելյանը կալանքի տակ է գտնվում: Սաղաթելյանի եւ Նարեկ Սամսոնյանի դեմ հաղորդում էր ներկայացրել Ալեն Սիմոնյանը: Նա իրավապահներից պահանջել էր, որ իրավական գնահատական տան «Իմ-նեմնիմի» հաղորդման ժամանակ իր հասցեին հնչեցված վիրավորական արտահայտություններին եւ սպառնալիքներին:

ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ օրեր առաջ Դավիթ Բեկի փողոցում փորձել են սպանել լուսահոգի հայտնի լեզվաբան, ԵՊՀ դասախոս Փառանձեմ Մեյթիխանյանի ամուսնու՝ Եղիշե Խաչատրյանի սպանության գործով մեղադրյալ Արտաշես Չիչոյանին:

Հիշեցնենք, որ դեպքը տեղի է ունեցել դեկտեմբերի 5-ին: Երեւանում վիճաբանություն, ծեծկռտուք էր տեղի ունեցել, որի ժամանակ հնչել էին կրակոցներ: Shamshyan.com-ը հայտնել էր, որ Դավիթ Բեկի փողոցում մի խումբ անձանց միջեւ վիճաբանություն է տեղի ունեցել, որն այնուհետեւ վերածվել է ծեծկռտուքի, որի ժամանակ էլ հնչել են կրակոցներ:

Արդյունքում, մասնակիցներից մեկը իր մոտ եղած հրազենով կրակոցներ է արձակել, ինչի հետեւանքով Ա. Չիչոյանը ոտքի հատվածում մարմնական վնասվածքներ է ստացել: Պարզվում են դեպքի հանգամանքներն ու մասնակիցների ինքնությունը:

Հիշեցնենք նաեւ, որ 58-ամյա Եղիշե Խաչատրյանը սպանվել էր 2016թ. հուլիսի 4-ին: Գործով մեղադրվում էին 5 անձ՝ Արտաշես Չիչոյանը, Արարատ Նիկողոսյանը, Խաչիկ Կոսյանը, Արթուր Ջաքարյանն ու Յուրի Հակոբյանը:

Դավիթ Բեկ փողոցում, փաստորեն, ցանկացել էին սպանել կասկածյալ Արտաշես Չիչոյանին. նա մեկ տարի առաջ էր հայտնվել ազատության մեջ:

Իսկ թե ինչու են ցանկացել սպանել Արտաշես Չիչոյանին, ով կամ ովքեր նրա հետ խնդիր ունեին, հուսանք կպարզի քննությունը:

ՉԵԽԻԱՅԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՎԱՐՉԱՊԵՏԸ

Չեխիայի նախագահ Պետր Պավելը վարչապետ է նշանակել ժողովրդական ANO կուսակցության առաջնորդ միլիարդատեր Անդրեյ Բաբիշին, որը հաղթել էր վերջերս կայացած խորհրդարանական ընտրություններում: Այս մասին հայտնում է Reuters-ը:

Արարողությունը հեռարձակվել է չեխական հեռուստատեսությամբ:

«Ես Ձեզ նշանակում եմ Կառավարության ղեկավար: Վստահ եմ, որ Դուք ձեր ողջ էներգիան, գիտելիքներն ու փորձը կնվիրեք Չեխիայի Հանրապետության բարօրությանը», - ասել է Չեխիայի նախագահը:

Նախագահ Պավելն արարողության ժամանակ կոչ է արել Բաբիշին պահպանել ամուր հարաբերություններ ԵՄ-ի եւ ՆԱՏՕ-ի հետ ներկայիս անվտանգության միջավայրում:

Բաբիշի խոսքով՝ նա ցանկանում է պաշտպանել չեխական շահերը ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտերկրում, եւ ձեւավորվել կաբինետը ժամանակին, որպեսզի կարողանա մասնակցել դեկտեմբերի 18-19-ը կայանալիք ԵՄ առաջնորդների գագաթնաժողովին:

Ակնկալվում է, որ Բաբիշն իշխանությունը կստանձնի հաջորդ շաբաթ կաբինետի ամբողջական կազմը ձեւավորվելուց հետո: Նրա կաբինետում կընդգրկվի Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը:

71-ամյա Բաբիշը վերադառնում է իշխանության չորս տարվա ընդդիմությունից հետո:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ԻՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔ ՈՒՆԻ ՔՊ-Ի ՑՈՒՑԱԿՈՎ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ Դ. ԱՌԱՔԵԼՅԱՆԸ

Armlur.am-ը տեղեկացավ, որ ԱԺ աշխատակազմի ղեկավար Դավիթ Առաքելյանը եւս ՔՊ-ի 2026 թվականի նախընտրական ցուցակում է առաջադրվել:

Հիշեցնենք, որ Առաքելյանը համարվում է ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի մտերիմ ընկերը: Վերջինս 2023 թվականին Ալեն Սիմոնյանի կարգադրությամբ ազատվել էր Ազգային ժողովի նախագահի օգնականի պաշտոնից եւ նշանակվել ԱԺ աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղարի պաշտոնում:

Հիշեցնենք, որ դեռեւս 2024 թվականի հոկտեմբերին մամուլում գրվել էր, որ Էրեբունի վարչական շրջանի՝ իր բնակության վայրի հարակից տարածքներում, մտերիմ շրջապատում Դավիթ Առաքելյանին «ձուկ» մականունով են դիմում: Նրա արդեն նախկին ընկերներից մի քանիսը պատմել էին, որ բոլորը գիտեն, թե Դավիթին ինչպես են դիմում, եւ ինքն էլ վաղուց վատ չի զգում իր մականվան համար:

Սույն թվականի հոկտեմբերին ArmLur.am-ը ներկայացրել էր Դավիթ Առաքելյանի ունեցվածքը: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կայքում հրապարակված 2024 թվականի անշարժ գույքի, եկամուտների, շահերի եւ ծախսերի հայտարարագրից պարզ է դառնում, որ Դավիթ Առաքելյանը սեփական անշարժ գույք չի տնօրինում եւ բնակվում է այլ անձի սեփականությամբ հանդիսացող բնակարանում, որը 90 օրից ավելի օգտագործում է: Առաքելյանը 2021 թվականին նվիրատվությամբ ստացել էր 2016 թվականի արտադրության Toyota մակնիշի ավտոմեքենա, որը նախորդ տարի վաճառել է 6,6 մլն դրամով, սակայն մոտ 7 մլն դրամ արժողությամբ նվերը ումից է ստացվել՝ հստակեցված չէ: ԱԺ աշխատակազմի ղեկավարի բանկային հաշիվներում տարվա ավարտին արձանագրվել է 1 մլն 377 հազար դրամ մնացորդ: Բացի դրանից, նա հայտարարագրել է կրիպտոարժույթ՝6,474 FTN: Նրա կանխիկ միջոցները կազմել են 32 հազար դոլար, 14 մլն 250 հազար դրամ, 7 հազար եվրո եւ 2 հազար շվեյցարական ֆրանկ: Հարց է առաջանում՝ ինչպե՞ս է Առաքելյանը կուտակել այս գումարները, ո՞րն է դրանց աղբյուրը. գումարի ծագումնաբանությունը հայտարարագրում բացակայում է:

Հայտարարագրված հաշվետու տարվա եկամուտները ընդհանուր առմամբ կազմել են 22 մլն 76 հազար դրամ, որից 15 մլն 376 հազար դրամը ստացել է որպես աշխատավարձ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմից, 6,6 մլն դրամը՝ ավտոմեքենայի վաճառքից, իսկ ընդամենը 100 հազար դրամը «այլ եկամուտ» է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից: 2024 թվականին Առաքելյանը միանվագ կատարել է 15,5 հազար դոլարի ծախս, սակայն, թե ինչ նպատակով կամ ինչ գնումների վրա է այդ գումարը ծախսվել, հայտարարագրում նշված չէ:

Դավիթ Առաքելյանը, որը հանդիսանում է Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար, նաեւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՆՈՐ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԸ

Դեկտեմբերի 8-ին Վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշման համաձայն՝ Անժելա Կժդրյանը նշանակվել է վարչապետի հասարակական հիմունքներով խորհրդական:

Ո՞վ է նորանշանակ խորհրդականը.

Անժելա Կժդրյանը եղել է ՀՀ կրթության եւ գիտության նախարարի մամուլի քարտուղարը Արայիկ Հարությունյանի նախարարության ժամանակ:

Մինչ խորհրդական դառնալը Անժելա Կժդրյանը եղել է Վարչապետի աշխատակազմի Ռազմավարական հաղորդակցության եւ մասնակցային կառավարման բարեփոխման ծրագրերի ղեկավարը եւ անգամ հանդես է եկել ելույթով ամենամյա «Ժողովրդավարության հայկական ֆորումի» ժամանակ տեղի ունեցած պանելային քննարկման ժամանակ՝ «Հայաստանում մեդիա միջավայրի վրա ազդող գործոնները» խորագրով:

Անժելա Կժդրյանն ավարտել է Երեւանի պետական համալսարանի արեւելագիտության ֆակուլտետը, մագիստրոսի աստիճան ստացել ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում: Կժդրյանը մարքեթինգի ոլորտում մասնագիտացել է Շեֆիլդի համալսարանի Executive MBA ծրագրով: Աշխատել է որպես թղթակից «Մեդիամաքս» լրատվական գործակալությունում, IdeA հիմնադրամում համակարգել է հասարակայնության հետ կապերը, իսկ «Բրեւիս» ընկերությունում աշխատել է որպես հաղորդակցության ավագ մասնագետ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՎԱՌԵԼԻՔԻ ՏԱՐԱՆՑՈՒՄԸ՝ ԱՆՎՃԱՐ

Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարությունը հայտարարել է, որ Ադրբեջանից Հայաստան Վրաստանի տարածքով վառելիքի տարանցման խնդրանք է ստացել գործընկեր երկրներից:

Այս մասին հայտնել է Վրաստանի առաջին ալիքը՝ շեշտելով, որ նախարարությունն այդպիսով արձագանքել է ավելի վաղ ադրբեջանական լրատվամիջոցներում տարածված տեղեկություններին, թե Վրաստանի կողմից կիրառվող սակագնային արգելքները խոչընդոտում են Ադրբեջանի Հայաստան Վրաստանի տարածքով վառելիքի մատակարարմանը:

Նախարարության տվյալներով՝ դեկտեմբերի 5-ին Վրաստանի կառավարությունը գործընկեր երկրներից ստացել է Վրաստանի տարածքով Ադրբեջանից Հայաստան վառելիքի միանվագ տարանցման խնդրանք:

Նշվում է, որ Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն «Վրացական երկաթուղիներ»-ին հանձնարարվել է անվճար իրականացնել այս տարանցումը: Այս որոշումը պաշտոնապես հաղորդվել է բոլոր համապատասխան կողմերին:

«Վրաստանը միշտ եղել եւ մնում է ռազմավարական եւ հուսալի գործընկեր թե՛ Հայաստանի, թե՛ Ադրբեջանի համար: Մենք մշտապես աջակցել ենք խաղաղությանը եւ տարածաշրջանային համագործակցությանը», - ասված է Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարության տարածած հաղորդագրության մեջ:

ՆԱՐԵԿ ՋԵՅՆԱԼՅԱՆԸ ԱՌԱՋԱԴՐՎԵԼ Է

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ ԱԺ ՔՊ խմբակցության նախկին պատգամավոր, «Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ի տնօրեն Նարեկ Զեյնալյանը եւս առաջադրվել է ՔՊ-ի 2026 թվականի նախընտրական ցուցակում:

Հիշեցնենք, որ 2024 թվականի նոյեմբերին Նարեկ Զեյնալյանը հայտարարեց պատգամավորական լիազորությունները դադարեցնելու մասին:

«Իմ նախաձեռնությամբ դադարեցնում եմ պատգամավորական լիազորություններս: Ինչպես մինչ այսօր, այսուհետեւ եւս գիտելիքներս եւ փորձս շարունակելու եմ ծառայեցնել Հայաստանի Հանրապետությանը», - նշել էր Զեյնալյանը:

Հավելենք, որ ըստ մամուլում շրջանառվող տեղեկությունների՝ Ազգային ժողովում Քննչական կոմիտեի նախկին նախագահ Արգիշտի Քյարամյանի հետ տեղի ունեցած հայտնի միջադեպից հետո Նարեկ Զեյնալյանը Նիկոլ Փաշինյանից SMS էր ստացել ու մանդատը վայր դրել:

ՀԱՐՁԱԿՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

ՆՈՐ ԲՌՆԱՐԱՐՔ՝ ՉԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՆԱԽՈՐԴ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՖՈՆԻՆ

Դեկտեմբերի 8-ին՝ ժամը 13:30-ի սահմաններում, քաղաքացիներ եւ ԱԺ նախկին պատգամավոր Միհրան Հակոբյանը Երեւանի «Dalma Garden Mall»-ի ավտոկայանատեղիում ենթարկվել է դիմակավորված երկու անձի հարձակման: Վերջիններս, ըստ տվյալների, անսպասելի մոտեցել են թիկունքից, որի հետեւանքով Հակոբյանը ստացել է մարմնական վնասվածքներ՝ կոտրվել է քիթը, ինչպես նաեւ հարվածներ է ստացել գլխի շրջանում: Դեռքից հետո նրան տեղափոխել են «Իզմիրլյան» բժշկական կենտրոն:

Նշենք, որ սա Միհրան Հակոբյանի դեմ երկրորդ հարձակումն է. 2021 թվականի հունիսի 22-ին նրա ավտոմեքենան վնասվել էր նռնակային հարձակման հետեւանքով: Փաստաբան Ռուբեն Մելիքյանի փոխանցմամբ, այդ գործի քննությունն արդեն չորս տարի է շարունակվում է, բայց մինչ օրս չկա ոչ մի մեղադրյալ կամ կասկածյալ:

ArmLur.am-ը այցելել էր դեպքի վայր՝ պարզելու, թե ինչ են նկատել ականատեսները միջադեպի պահին: Պարզվել է, որ Հակոբյանը մեքենան կայանել էր «Դալմա մոլի» տարածքում՝ մտնելու մոտակա բժշկական կենտրոն՝ հոր հետազոտության պատասխանները վերցնելու: Մեքենայից իջնելու պահին միջին տարիքի երեք տղամարդ՝ երկուսը սեւ բաճկոնով, մեկը կարմիր, բոլորը բժշկական դիմակներով, մոտեցել են թիկունքից եւ հարձակվել նրա վրա: Նրանք որեւէ բառ չեն ասել, չեն հայհոյել կամ բացատրություն ներկայացրել. պարզապես լուռ կատարել են իրենց գործողությունները եւ, նկատելով դեպի նրանց շտապող քաղաքացիներին, արագ նստել են սեւ գույնի Toyota Camry մակնիշի, 37JO… տեսանելի համարանիշներով ավտոմեքենան, որը մինչ այդ կանգնած սպասել էր նրանց:

ՀՀ Քննչական կոմիտեն ArmLur.am-ին հաղորդել է, որ դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 167-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ եւ 12-րդ կետերով (առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը՝ մի խումբ անձանց կողմից, խուլիգանական դրդումներով): Նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն, կատարվում է նախաքննություն, սակայն մինչ այս պահը չկա որեւէ կասկածյալ՝ ոչ կատարողների, ոչ էլ հնարավոր պատվիրատուների մասով:

Եթե չորս տարի առաջ տեղի ունեցած հանցագործությունը Միհրան Հակոբյանի դեմ բացահայտված լիներ, այսօր անպատժելիությունը նոր դրսեւորում չէր ստանա: Հարձակումը տեղի է ունեցել մարդաշատ տարածքում, ինչը ցույց է տալիս, որ հարձակվողները չեն վախեցել տեսախցիկներից կամ ականատեսներից: Ակնհայտ է նաեւ, որ նրանք գործել են պատվերով՝ հստակ հանձնարարությամբ:

Հիշեցնենք, որ 2023-ի հունիսին իր տան բակում դաժան ծեծի էր ենթարկվել նաեւ հասարակական քաղաքական գործիչ Էդգար Ղազարյանը, որի գործը մինչ օրս բացահայտված չէ: Անպատիժ են մնացել բոլոր բռնարարները: 2024-ի ապրիլի 16-ին ոստիկանների հսկողության տակ գտնվող երիտասարդ Սամվել Վարդանյանը նույնպես ծեծի ենթարկվեց դիմակավորված անձանց կողմից, եւ այդ գործով եւս չկա մեղադրյալ կամ կասկածյալ:

Նիկոլ Փաշինյանը ֆեյսբուքյան գրառմամբ դատապարտել է բռնությունը, սակայն ակնհայտ է, որ թվարկված բոլոր դեպքերն իրենց բնույթով քաղաքական վրեժխնդրության դրսեւորումներ են: Բռնությունը մերժելու խոստումով իշխանության եկած Նիկոլ Փաշինյանի կառավարման տարիներին քաղաքական ընդդիմախոսների նկատմամբ բռնությունը դարձել է գրեթե օրինաչափություն, եւ երբեմն նույնիսկ փաստաբաններին են կալանավորում հասարակ գրառման համար:

Սա այն «սիրո եւ հանդուրժողականության» մթնոլորտն է, որտեղ այսօր ապրում ենք նոր Հայաստանում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՎԱՅՐ Է ԸՆԿԵԼ

Դեկտեմբերի 6-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 23:35-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Մալաթիայի բաժնում օպերատիվ տեղեկություն է ստացվել, որ Շերամի փողոցի թիվ 59 հասցեից «պոլիտրավմա» ախտորոշմամբ Երեւանի 1-03 շտապօգնության խումբը անգիտակից վիճակում «Աստղիկ» բժշկական կենտրոն է տեղափոխել մի քաղաքացու:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, քիչ հետո ոստիկանության Մալաթիայի բաժին են զանգահարել «Աստղիկ» բժշկական կենտրոնից եւ հայտնել, որ վիրավորը գիտակցության չգալով մահացել է:

Հիվանդանոց է մեկնել ոստիկանության Մալաթիայի բաժնի օպերատիվ խումբը՝ բաժնի պետ Կարեն Բունիաթյանի գլխավորությամբ, որտեղ պարզվել է, որ մահացածը Երեւանի բնակիչ 20-ամյա Դավիթ Պ.-ն էր:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ ոստիկանության ծառայողները պարզել են, որ դեկտեմբերի 6-ին Շերամի փողոցի թիվ 59 շենքում Դավիթ Պ.-ն անհայտ հանգամանքներում բարձրությունից վայր է ընկել, եւ ձեռնարկվում են միջոցառումներ՝ դեպքի հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Դեպքի փաստով ոստիկանության Մալաթիայի բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք փոխանցվել են ՀՀ Քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Մալաթիա Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժին, որտեղ դեպքի փաստով նախաձեռնվել է քրեական վարույթ:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ՏՂԱՄԱՐԴՈՒ ԴԻ

Դեկտեմբերի 9-ին առեղծվածային ու ողբերգական դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 12:00-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության 9-11 ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ Կիեւյան կամրջի տակ՝ Հրազդանի կիրճում՝ Հրազդան գետում, դի կա:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, ժամանել են Երեւանի թիվ 7-րդ հրշեջ-փրկարարական ջոկատից 1 մարտական հաշվարկ՝ օղակի հրամանատար Գրիգոր Գալստյանի գլխավորությամբ:

Ժամանել են նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 4-րդ գումարտակի 2-րդ վաշտի պարեկները՝ գումարտակի հրամանատար Արսեն Ստեփանյանի, վաշտի հրամանատար Վլադիմիր Դերձյանի գլխավորությամբ:

Տարածքը սահմանազատել են նույն վաշտի ավագ պարեկ Վարանցով Բալասանյանն ու կրտսեր պարեկ Նորիկ Այվազյանը:

Ժամանել են նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Մաշտոցի բաժնի օպերատիվ խումբը՝ բաժնի պետի տեղակալ Գեւորգ Պողոսյանի գլխավորությամբ:

Փրկարարները Հրազդան գետից դուրս են բերել տղամարդու մարմին:

Տեղում աշխատում էին ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ եւ Դավիթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի քննիչները՝ բաժնի պետ Էդգար Բալոյանի եւ հատկապես կարեւոր գործերով ավագ քննիչ Գարուշ Գեւորգյանի եւ Կարապետ Չոբանյանի գլխավորությամբ:

Դեպքի փաստով քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

Նոյեմբերի 8-ից 9-ը հանրապետությունում բացահայտվել է 130 հանցագործություն, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:

Մասնավորապես՝

52 դեպք՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու,

13 դեպք՝ մարմնական վնասվածք պատճառելու,

12 դեպք՝ թմրանյութի հայտնաբերման,

9 դեպք՝ ֆիզիկական ներգործության,

7 դեպք՝ անձնական ունեցվածքի գողության,

4-ական դեպք՝ խարդախության, գույքը ոչնչացնելու կամ վնասելու,

2-ական դեպք՝ հոգեկան ներգործության, սառը զենքի հայտնաբերման, փաստաթղթի կեղծիքի, ընդերքի պահպանման կամ օգտագործման պահանջները խախտելու:

Բացահայտվել է ավազակության, բնակարանային գողության, վստահված գույքի հափշտակման, շորթման, ապօրինի ձեռնարկատիրական գործունեության, խուլիգանության, զենք-զինամթերքի առգրավման, թմրանյութի իրացման, ծառերը, թփերը ապօրինի հատելու, անձի տիրապետությունից դուրս եկած գույքին տիրանալու, հարկերը, տուրքերը կամ այլ վճարներ չվճարելու, աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելու, հուշարձաններ ոչնչացնելու եւ այլ դեպքեր:

Նախկինում կատարված հանցագործություններից բացահայտվել է 2 դեպք՝ անձնական ունեցվածքի գողության:

Հայտնաբերվել է 4 հետախուզվող, կամավոր ներկայացել՝ 2-ը:

Հայտնաբերվել է 1 անհետ կորած:

ՀԵՏԱԽՈՒԶՎՈՂԻ ԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ

Համայնքային ոստիկանության Նոր Նորքի բաժնի ծառայողները ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում դեկտեմբերի 8-ին Բուզանդի փողոցում հայտնաբերել եւ բաժին են տեղափոխել 39-ամյա մի տղամարդու, որը դեկտեմբերի 1-ից Համայնքային ոստիկանության Շենգավիթի բաժնի կողմից հետախուզվում էր առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ դրանց ածանցյալների կամ պրեկուրսորների ապօրինի շրջանառության մեղադրանքով. խափանման միջոց է ընտրվել կալանքը:

ԿԱՆԵՓԻ ԹՓԵՐ

Համայնքային ոստիկանության Սիսիանի բաժնում օպերատիվ տեղեկություն էր ստացվել, որ Բալաք գյուղի 36-ամյա բնակիչը պահում եւ օգտագործում է թմրամիջոց:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված զննությամբ 36-ամյա տղամարդու տանը կից անասնագոմի տանիքում հայտնաբերվել են կանեփի թփեր՝ ընդհանուր 1135 գրամ քաշով:

Կատարվում է նախաքննություն:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 8-ից 9-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 130 դեպք, որից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԹԱՓԱՌՈՂ ՇՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԴԵՌ ՉԻ ԼՈՒԾՎԵԼ

Իջեւանից հայտնում են, որ վերջին օրերին Տավուշի մարզկենտրոնում թափառող շների կողմից ընտանի կենդանիների հարձակման, ընտանի կենդանիների ոչնչացման դեպքեր են եղել: Մի դեպքում թափառող շները ոչնչացրել են Իջեւանի բնակչի ճագարներին, մի այլ դեպքում՝ բնակիչներից մեկի բադերին: Ընտանի կենդանիների կորուստ ունեցած իջեւանցին սպառնացել է մետաղե օղակներ սարքել, դրանցով բռնել, ոչնչացնել թափառող շներին: Իջեւանի քաղաքապետարանի աշխատակիցը նրանից պահանջել է նման բան չանել: Այս տարվա ամռանը Իջեւանի բնակիչներից դժգոհություններ կային, որ քաղաքի կենտրոնում՝ Շատրվանների հրապարակում մշտապես գտնվող «Ռիժիկ» շունն ագրեսիվ է քաղաքի կենտրոնով անցնող մարդկանց հանդեպ: Իջեւանցիներից ոմանք էլ նշում էին, որ այդ շունը ագրեսիվ է միայն իր հանդեպ ագրեսիվություն ցուցաբերած մարդկանց նկատմամբ: Հուլիսին «Ռիժիկին» հատուկ մեքենայով տեղափոխեցին Երեւան՝ շների ապաստարան:

Իջեւանում թափառող շները այս տարի երկու անգամ հարձակվել են համայնքի կոմունալ ծառայության բանվորների վրա: Իջեւանի բնակչուհիներից մեկը գրավոր դիմել է համայնքապետարան այն հարցով, որ թափառող շունը հարձակվել է իր ձեռքիննդամթերքով փաթեթի վրա: Ռուսաստանի քաղաքացի Սվետլանա Նեկրասովան իր ռուս ամուսնու հետ բնակվում է Իջեւան քաղաքին հարակից Գանձաքար գյուղում: Նեկրասովան Իջեւան քաղաքի մոտակա Գետահովիտ գյուղում «Պրիյուտ» անվանումով ապաստարան ունի: Նա մեր թղթակցին հայտնեց, որ թափառող շների խնդրի լուծումն ինքը տեսնում է համայնքապետարանի, կենդանասեր կամավորների եւ միջազգային կազմակերպությունների համագործակցային աշխատանքով: Իջեւան քաղաքից կենդանասեր Լիլիթ Օքսինյանը, ով երաժշտության ուսուցիչ է, հայտնեց, որ ինքն ամիսներ շարունակ շների համար սնունդ է պատրաստել, տարել Գետահովտում գործող ապաստարան, սակայն Նեկրասովան անհայտ պատճառներով արգելել է իրեն դա անել, նաեւ պահանջել է լքել տարածքը՝ հայտարարելով, որ դա մասնավոր տարածք է, չլքելու դեպքում ինքը ոստիկանություն կկանչի: Լ. Օքսինյանը հայտնեց, որ Ներկրասովան համացանցում փակել է շների ապաստարանի էջը, հավանաբար այն պատճառով, որ մարդիկ չտեսնեն, թե ովքեր եւ ինչքան են հովանավորում, աջակցում այդ ապաստարանին: Իջեւանի համայնքապետարանից տեղեկացանք, որ համայնքապետարանը մայիսից մինչեւ հոկտեմբեր ամիսը կազմակերպել է շուրջ 100 թափառող շների ստերջացումը: Համայնքապետարանը համագործակցում է Հայաստանի եւ Իջեւանի կենդանասերների հետ: Իջեւանի կոմունալ ծառայության իրավաբան, կենդանասեր Դավիթ Սահակյանը գրեթե ամեն օր զբաղվում է թափառող շների խնդրով. այդ հարցն այս տարի ներկայացվել է նաեւ Տավուշում աշխատող եվրոպացի դիտորդներին: 2026 թվականին Գերմանիայի աջակցությամբ Իջեւանում թափառող շների եւ կատուների ստերջացման ծրագիր կիրականացվի:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ

ՓՈՓԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՊՈՂՊԱՏԵ ԱՄՐԱՆՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՒՄ

Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքից ArmLur.am-ը տեղեկանում է, որ քննարկման է դրվել «Հայաստանի Հանրապետություն պողպատե ամրանների ներմուծման լիցենզավորման ընթացակարգը եւ հիմնական լիցենզիայի ձեւը սահմանելու մասին» նոր նախագիծ:

Նախագիծը սահմանում է՝ «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին» օրենքով ամրագրվող դրույթների կիրարկման ապահովման նպատակով պողպատե ամրանների ներմուծման լիցենզավորման ընթացակարգի եւ հիմնական լիցենզիայի ձեւի հաստատումը, ինչն էլ իր հերթին ուղղված է ոլորտային արտադրատեսակների շուկայում հավասար մրցակցության, արտադրական ավելի երկար շղթաների կիրարկման, առավել բարձր ավելացված արժեքով տեղական ապրանքների արտադրության զարգացման խթանման, տեղական մետաղագործական ձեռնարկությունների արտադրանքի բնականոն գործունեության ապահովմանը:

Նախագիծը մշակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից:

ArmLur.am-ը տեղեկանում է, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործում են «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ, «Չարենցավանի հաստոցաշինական գործարան» ԲԲԸ, «Նիկոլ Դուման» ԱԿ, «Ձուլակենտրոն» ԲԲԸ ձուլարանները, կառուցվում ու վերակառուցվում են «Ջի Թի Բի սթիլ» ՍՊԸ, «Քարակերտի քարաձուլման գործարան» ԲԲԸ ձուլարանները:

Նախագծի հիմնավորման մեջ առկա է թվային աղյուսակ, որից էլ տեղեկանում ենք, որ 2022-ից 2024 թվականներին Հայաստանի Հանրապետություն ներմուծված թիրախային արտադրանքի քանակի գերակշիռ մասը՝ 75.5%-ը (գումարային արտահայտությամբ՝ 80.2%-ը) ներմուծվել է ԻԻՀ-ից:

Վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ ԻԻՀ-ից 7214 ապրանքային դիրքերում դասակարգվող ապրանքների (պողպատե ամրանների) 1 տոննայի գինը (առանց ԱԱՀ) Հայաստանում կազմում է 200.000-ից 205.000 դրամ:

Հայաստանում արտադրվող 1 տոննա պողպատե ամրանի մասով կատարված ծախսերը կազմում են շուրջ 230.000-ից 250.000 ՀՀ դրամ (վերլուծության համար հիմք հանդիսացող ցուցանիշները ՀՀ-ում գրանցված կազմակերպությունների հրապարակային ֆինանսական հաշվետվություններն են):

Ըստ վիճակագրական տվյալների՝ ԻԻՀ-ից պողպատե ամրանների ներկրումը Հայաստանի Հանրապետություն շարունակաբար աճում է:

Համաձայն Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի ուսումնասիրությունների՝

- 2023 թվականին 2022 թվականի համեմատ 1 տոննա ամրանի միջին կշռված մաքսային արժեքը 269.000 դրամից նվազել է 52.000 դրամով եւ կազմել 217.000 դրամ:
- ՀՀ-ում արտադրված 1 տոննա ամրանի միջին գինը կազմում ՝ 259.600 դրամ, նվազագույն եւ առավելագույն գները՝ 215.000 եւ 300.000 դրամ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի օգոստոսի 7-ի N 1077-Ն որոշման ուժի մեջ մտնելուց հետո, տրամադրված հիմնական լիցենզիաների համաձայն, 2025 թվականի օգոստոս-հոկտեմբեր ամիսների ընթացքում Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել մոտ 23 հազար տոննա պողպատե ամրան, որի ներմուծման հիմնական լիցենզիայի տրամադրման համար պետական տուրքի գումարը կազմել է մոտ 654 686 000 դրամ:

Նախագծում ասվում է. «Նախագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում մշակող արդյունաբերության գերակա ճյուղ համարվող ծանր արդյունաբերության խթանման, ինչպես նաեւ ռազմավարական նշանակություն ունեցող ապրանքների (սեւ մետաղների) ներքին արտադրության եւ առեւտրի կանոնակարգման անհրաժեշտությամբ: Նպատակ ունենալով զարգացնել առավել բարձր ավելացված արժեք ունեցող ապրանքների արտադրությունն ու հումքային ռեսուրսների ներքին սպառումը՝ ՀՀ կառավարությունը մի շարք որոշումներով արգելել է սեւ եւ գունավոր մետաղների ջարդոնի եւ դրանց պարունակությամբ թափոնների արտահանումը: Նշված սահմանափակումներն ուղղված են տեղում սեւ եւ գունավոր մետաղների ջարդոնի վերամշակման, թափոններից մետաղների կորզման եւ առավել բարձր ավելացված արժեքով արտադրանքների արտադրության խթանմանը», - ասված է նախագծի հիմնավորման մեջ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՎԻԶԱՆԵՐԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՈՒՄ

ԵՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Է

ՀՀ-ԵՄ վիզաների ազատականացման երկխոսության շրջանակում՝ Հայաստանում է Գործողությունների ծրագրի կատարողականի ԵՄ գնահատման առաջին առաքելությունը: Դեկտեմբերի 8-ին ՆԳ նախարարի տեղակալ Արմեն Ղազարյանը հանդիպել է առաքելության ներկայացուցիչներին: Այս մասին տեղեկացնում է ՆԳՆ-ն:

Հանդիպմանը ներկա էին ՆԳ նախարարության, ԵՄ պատվիրակության, ԵՄ հաստատությունների, ՖՐՈՆՏԵՔՍ-ի ներկայացուցիչներ եւ ԵՄ անդամ պետությունների ոլորտային փորձագետներ:

Արմեն Ղազարյանն իր խոսքում նշել է, որ համապատասխան գերատեսչությունների հետ բազմակողմ քննարկումները հնարավորություն կտան ստանալ լրացուցիչ տեղեկատվություն, ինչը կնպաստի ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ առավել ամբողջական եւ խոր պատկերացումներին: Փոխնախարարը նշել է, որ մի շարք ռազմավարական փաստաթղթեր մշակման փուլում են:

Կողմերն ընթացիկ գործընթացներում կարեւորել են որակի առաջնահերթությունը՝ ընդգծելով, որ մշակվող փաստաթղթերը պետք է լինեն համակողմանի, կենսունակ եւ գործնականում կիրառելի՝ ապահովելով բարեփոխումների արդյունավետ իրականացումը:

Առաքելության անդամները, բարձր գնահատելով Հայաստանի հետ կառուցողական գործընկերությունը, կարեւորել են Գործողությունների ծրագրի օրենսդրական եւ ոլորտային քաղաքականությունների շրջանակին վերաբերող առաջին փուլի հենանիշների կատարման առաջընթացի գնահատումը:

Նշվել է, որ Գործողությունների ծրագրի վերաբերյալ Եվրոպական հանձնաժողովի առաջին զեկույցը նախատեսվում է պատրաստել Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովին ընդառաջ:

Նույն օրը ԵՄ գնահատման առաքելության անդամները Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությունում Ծառայության պետ Նելլի Դավթյանի գլխավորությամբ հանդիպել են գերատեսչության ղեկավար կազմի հետ:

Նելլի Դավթյանը նշել է, որ Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությունը ՀՀ-ԵՄ վիզաների ազատականացման գործողությունների ծրագրի իրականացման ուղղությամբ ներդնում է բազմակողմ եւ հետեւողական ջանքեր:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 17 պատահար, 2 մարդ մահացել է, 21-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐ

ՊՈՒՏԻՆԸ ՍՏՈՐԱԳՐԵԼ Է ՆՈՐ ՀՐԱՄԱՆԱԳԻՐ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը երկուշաբթի՝ դեկտեմբերի 8-ին, ստորագրել է հրամանագիր, որով քաղաքացիներին կանչում է 2026 թվականի զինվորական հավաքների:

Իրավական տեղեկատվության պորտալում հասանելի փաստաթղթի համաձայն՝ պահեստազորայինները կուղարկվեն ամենամյա պատրաստության, եւ Ռուսաստանի Դաշնության կառավարությունն ու տարածաշրջանային իշխանությունները պարտավոր են կազմակերպել այն:

Հրամանագիրը, որն ուժի մեջ է մտնում անմիջապես, պարունակում է երկու գաղտնի բաժին՝ «միայն ծառայողական օգտագործման համար» նշումով: Այս բաժիններում, ենթադրաբար, նշվում է պատրաստության ուղարկվող քաղաքացիների թիվը եւ պատրաստության ժամկետը:

Զմռանը զինվորական պատրաստությունը հազվադեպ երեւույթ է Ռուսաստանում: Անցյալ տարի Պուտինը հրամանագիր է ստորագրել, որով կոչ է արել այն անցկացնել հունվարին՝ 20 տարվա ընթացքում առաջին անգամ: Նմանատիպ հրամանագիր ստորագրվել է 2024 թվականի մարտի 1-ին, 2023 թվականի մայիսի 10-ին, 2022 եւ 2021 թվականների ապրիլի 26-ին եւ 2020 թվականի հունիսի 29-ին: 2019 թվականի ուսումնական ճամբարի մասին հայտարարվել է փետրվարի վերջին եւ տեղի է ունեցել մարտ ամսին, մինչդեռ 2004-2018 թվականների ուսումնական ճամբարները սկսվել են մարտից մինչեւ հունիս ամիսը:

Ուսումնական ճամբարները 2000-ականների սկզբին պարբերաբար անցկացվել են հունվարին, եւ Պուտինը սովորաբար դրանց մասին հրամանագիրը ստորագրել է տարվա վերջին օրերից մեկում:

Բոլոր ռուս երիտասարդները պետք է ուղարկվեն վեցամսյա ռազմական պատրաստության՝ ՆԱՏՕ-ի հետ լայնածավալ պատերազմին պատրաստվելու համար, նախկինում հայտարարել էր Պետդումայի պաշտպանության կոմիտեի անդամ, գեներալ-լեյտենանտ Վիկտոր Սոբոլեւը:

«Մենք չունենք պատրաստված զորահավաքային պահեստազոր՝ լայնածավալ պատերազմ սկսելու համար, եթե ՆԱՏՕ-ն այն սկսի: Տասից մեկը ծառայել է բանակում, իսկ տասը մարդուց ինը երբեք չեն ծառայել բանակում: Ի՞նչ տեսակի պահեստազոր կկազմեն նրանք: Ամեն ինչ պետք է փոխվի. մենք պետք է անցկացնենք մարզական ճամբարներ, մենք պետք է երիտասարդներին մարզենք ԴՈՍԱԱՖ համակարգում», - բացատրեց Սոբոլեւը:

Նրա խոսքով՝ «երիտասարդների 100%-ը պետք է ունենա զինվորական գրանցման մասնագիտություն», եւ դրա համար մարզումը պահանջում է առնվազն վեց ամիս:

«ԱԼՖԱ-ՖԱՐՄ»-Ը՝ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԻ ՄԱՍԻՆ

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ»-Ը ԿՏԵՂԱԲԱՇԽԻ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԸ

«Ալֆա-ֆարմ» ՓԲԸ-ն հայտարարում է դրամային անվանական արժեկտրոնային պարտատոմսերի վաճառքի մեկնարկի մասին: Մասնավորապես, թողարկվում է 1,5 մլրդ ՀՀ դրամ անվանական ծավալով ընդհանուր 15,000 հատ պարտատոմս: Պարտատոմսերի տեղաբաշխողն է «Ամերիաբանկ»-ը:

Պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված միջոցներն «Ալֆա-ֆարմ»-ն ուղղելու է կապիտալ ծախսերի իրականացմանը:

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը 100,000 ՀՀ դրամ է, արժեկտրոնային տարեկան տոկոսադրույքը՝ 11.3% (12 ամիս վճարման պարբերականությամբ), ձեռքբերման նվազագույն քանակը՝ 5 հատ, շրջանառության ժամկետը՝ 36 ամիս: Պարտատոմսերի տեղաբաշխումը մեկնարկելու է 2025թ. դեկտեմբերի 10-ին եւ ավարտվելու է 2026թ. փետրվարի 11-ին (կամ ավելի վաղ, եթե ամբողջ ծավալը շուտ վաճառվի):

Պարտատոմսերի թողարկման առթիվ ընկերությունից հայտնում են, որ «Ալֆա-ֆարմ»-ի գործունեության առաջնահերթություններից է առողջության պահպանման նախաձեռնությունների ուղղությամբ շարունակական ներդրումների իրականացումը՝ բնակչությանն առաջարկելով նորարարական լուծումներ ու ապահովելով մատուցվող ծառայությունների բարձր որակ: Դեղատնային ցանցերն առողջապահական համակարգի առանցքային օղակներից են, որոնք ոչ միայն ապահովում են անհրաժեշտ դեղորայքն ու այլ պարագաները, այլ նաեւ սոցիալական եւ ռազմավարական նշանակություն ունեն ոլորտի կայուն զարգացման տեսանկյունից:

«Ալֆա-ֆարմ»-ի պարտատոմսերի հրապարակային առաջարկը նշանավորում է մեր ընկերության զարգացման նոր փուլի մեկնարկը եւ հիմնված է ընկերության շահութաբերության, կանխիկի կայուն հոսքերի, արդյունավետ բիզնես մոդելի, տեխնոլոգիական նորարարությունների եւ շուկայում առաջատար դիրքի վրա: Մեր մրցակցային առավելությունները թույլ են տալիս վստահությամբ մուտք գործել Հայաստանի կապիտալի շուկա՝ ներդրողներին առաջարկելով մասնակցել ընկերության ռազմավարական ծրագրերի ֆինանսավորմանը՝ գրավիչ պայմաններով: Վստահ ենք, որ պարտատոմսերի տեղաբաշխումը կնպաստի ընկերության աճին եւ մեր առաքելության իրագործմանը՝ աջակցելու Հայաստանի առողջապահական ոլորտի զարգացմանը»,- նշել է «Ալֆա-ֆարմ»-ի գլխավոր տնօրեն Միքայել Մացակյանը:

Պարտատոմսերը կարելի է ձեռք բերել առցանց՝ «Ամերիաբանկի» MyAmeria հավելվածի MyInvest ներդրումային հարթակի միջոցով, կամ այցելելով «Ամերիաբանկի» որեւէ մասնաճյուղ եւ լրացնելով հայտ-հանձնարարականը, կամ ուղարկելով լրացված հայտ-հանձնարարականի ձեւն «Ամերիաբանկի» էլ. հասցեին՝ capitalmarkets@ameriabank.am:

Առաջնային տեղաբաշխումից հետո ընկերությունը դիմելու է Հայաստանի ֆոնդային բորսա պարտատոմսերը ցուցակելու նպատակով, ինչից հետո հնարավոր կլինի դրանք գնել կամ վաճառել երկրորդային շուկայում:

«Ալֆա-ֆարմ» ՓԲԸ պարտատոմսերի ազդագիրը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2025թ. նոյեմբերի 26-ի թիվ 1/429 Ա որոշմամբ:

Պարտատոմսերի ձեռքբերման կարգին, ազդագրի էլեկտրոնային տարբերակին եւ պարտատոմսերի հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարություններին կարելի է ծանոթանալ բանկի կայքէջում: Թողարկողի եւ առաջարկվող պարտատոմսերի բոլոր մանրամասները, ինչպես նաեւ դրանց առնչվող ռիսկերը ներկայացված են ազդագրում:

«Ալֆա-ֆարմ» ՓԲԸ-ի մասին

«Ալֆա-ֆարմ» դեղատնային ցանցն ամենամեծն է Հայաստանում. գործում է շուրջ 210 դեղատուն ՀՀ ողջ տարածքում: Գործունեության 30 տարիների ընթացքում ընկերությունը մշտապես կարեւորել է սպասարկման բարձր որակը, ինչի հավաստիքն են բազմաթիվ հաճախորդների գոհունակությունը եւ դրական արձագանքները:

«Ալֆա-ֆարմ»-ը մի շարք հայտնի եւ համաշխարհային բրենդների պաշտոնական եւ էքսկլյուզիվ ներկայացուցիչն է շուկայում: Ընկերության էքսկլյուզիվ ներմուծման ապրանքանիշերն են հանրահայտ Avene, Ducray, A-Derma, La Roche Posay, Vichy,Cerave, Bioderma, Frezyderm, Mustela խնամքի միջոցները, ինչպես նաեւ երեխաների խնամքի եւ կերակրման Bambo Nature, Danalac, Wet Brush, Beter ապրանքանիշերը: «Ալֆա-ֆարմը» նաեւ ակտիվ զարգացնում է վիտամինների եւ բիոակտիվ հավելումների ուղղությունը՝ ներմուծելով համաշխարհային հայտնի եւ պահանջված բրենդեր՝ Natures plus, New Nordic, Jerrow formula-ն, Natures Bounty եւ այլն:

«Ալֆա-ֆարմ» դեղատնային ցանցը ներկայացնում է նաեւ ՀՀ-ում առաջին օնլայն դեղատունը՝ 24/7 առաքման ծառայությամբ եւ խորհրդատվությամբ, որը հիմնադրվել է 2018 թվականին: Գերժամանակակից եւ բազմաֆունկցիոնալ օնլայն դեղատունը հասանելի է բջջային հավելվածի ու կայքէջի միջոցով՝ www.alfapharm.am, որոնք հնարավորություն են տալիս հաճախորդներին շուրջօրյա պատվիրել անհրաժեշտ դեղորայք, կոսմետիկ միջոցներ, ինչպես նաեւ մանկական պարագաներ:

«ԿՈՆՎԵՐՍ» ԲԱՆԿ

100,000 ԴՐԱՄ՝ ՊՐԵՄԻՈՒՄ ԴԱՍԻ Mastercard ՔԱՐՏԱՊԱՆՆԵՐԻՆ

«Կոնվերս» բանկը հայտարարում է խրախուսման արշավ C360 փաթեթների ներքո պրեմիում դասի Mastercard-երից օգտվող քարտապանների համար՝ առաջարկելով դեպի Իտալիա եւ Արաբական Միացյալ Էմիրություններ ճամփորդությունը դարձնել նաեւ ֆինանսապես եկամտաբեր՝ կատարված գնումներից ստանալով մինչեւ 100.000 դրամ փեբեք:

Արշավը գործում է 2025թ. դեկտեմբերի 1-ից մինչեւ 2026թ. հունվարի 31-ը ներառյալ եւ նախատեսված է այն ֆիզիկական անձ հաճախորդների համար, ովքեր բաժանորդագրված են կամ արշավի ընթացքում կբաժանորդագրվեն C360 Ultra, Elite, Signature, Synergy կամ Private փաթեթներից որեւէ մեկին:

Գնումների ընդհանուր գումարի 15%-ի չափով (առավելագույնը՝ 100.000 դրամ) քեշբեքից օգտվելու համար բավարար է ընդամենը նշված ժամանակահատվածում Իտալիայում կամ Արաբական Միացյալ Էմիրություններում գտնվելիս C360 MC World կամ MC World Elite քարտերով կատարել անկանխիկ գնումներ առեւտրի եւ սպասարկման կետերում: Հաշվի են առնվելու նաեւ թոքենիզացված քարտերով (Apple Pay, Google Pay) իրականացված գործարքները:

Քեշբեքը հաճախորդները կստանան Բանկում գործող ՀՀ դրամային հաշվին արշավի ավարտից հետո՝ մինչեւ 2026թ. փետրվարի 5-ը:

Մանրամասները՝ conversebank.am, 010 511 211

«Կոնվերս» բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԳԱՂԱՓԱՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ը՝ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

Այսօր՝ դեկտեմբերի 10-ին, նշվում է Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրը: 1948 թվականի հենց այս օրը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը՝ պատմական նշանակություն ունեցող փաստաթուղթ, որում առաջին անգամ հստակ ձեւակերպվեցին մարդու եւ անհատի հիմնական իրավունքները: 1950 թվականին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան առաջարկեց ամեն տարի դեկտեմբերի 10-ը նշել որպես Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օր, ինչը մինչ օրս իրականացվում է ամբողջ աշխարհում:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին դաշնակից երկրները ձեւակերպեցին «Չորս ազատությունները»՝ խոսքի ազատություն, կրոնի ազատություն, ազատություն վախից եւ ազատություն կարիքից: Սրանք դարձան պատերազմի գլխավոր գաղափարներից: ՄԱԿ-ի Կանոնադրությունն էլ վերահաստատեց հավատը մարդու հիմնարար իրավունքների, մարդու արժանապատվության եւ արժեքի նկատմամբ՝ պարտավորեցնելով անդամ պետություններին խթանել իրավունքների եւ ազատությունների համընդհանուր հարգանքը՝ անկախ ցեղից, սեռից, լեզվից կամ կրոնից:

Պատերազմից հետո, երբ լիովին բացահայտվեցին նացիստական ռեժիմի գործած զանգվածային հանցագործությունները, միջազգային հանրությունն ընդունեց, որ ՄԱԿ-ի Կանոնադրությունը բավարար չափով չի սահմանում մարդու իրավունքների ամբողջական շրջանակը: Այդ պատճառով անհրաժեշտ էր ստեղծել համընդհանուր փաստաթուղթ, որը կսահմանի յուրաքանչյուր մարդու իրավունքները: Այդպես էլ ընդունվեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որը համարվում է ՄԱԿ-ի կարեւորագույն ձեռքբերումներից մեկը:

Մարդու իրավունքների օրվա պաշտոնական հաստատումը տեղի ունեցավ 1950 թվականի դեկտեմբերի 4-ին՝ Գլխավոր ասամբլեայի 317-րդ լիագումար նիստում, երբ ընդունվեց թիվ 423 բանաձեւը՝ բոլոր պետություններին եւ կազմակերպություններին հրավիրելով ամեն տարի նշել այս օրը:

Հռչակագիրը ընդունելու ժամանակ 48 պետություն քվեարկեց կողմ, ութը ձեռնպահ մնացին: Փաստաթուղթը հռչակվեց որպես «բոլոր ժողովուրդների եւ ազգերի ձեռքբերումների ընդհանուր չափանիշ»: Թեեւ այն պարտադիր իրավական ուժ չունի, այնուամենայնիվ դարձել է հիմք ավելի քան վաթսուն միջազգային փաստաթղթերի, որոնք այսօր միասին ձեւավորում են մարդու իրավունքների պաշտպանության համաշխարհային ստանդարտը:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը թարգմանվել է ավելի քան 360 լեզվով եւ համարվում է աշխարհում ամենաշատ թարգմանված պաշտոնական փաստաթուղթը:

Դեկտեմբերի 10-ին տարբեր երկրներում եւ կազմակերպություններում անցկացվում են միջոցառումներ, որոնց նպատակն է ընդգծել մարդու իրավունքների պաշտպանության առաջնահերթությունը եւ դրա կարեւորությունը ժամանակակից հասարակության համար:

Մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները ամրագրված են նաեւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ: Հայաստանում գործում է Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը, իսկ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքը ընդունվել է 2003 թվականի հոկտեմբերի 21-ին:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՄԱՐՔԱԿԱՆ

ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿ՝ ՆԻԿԻՏԱ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ

Մոսկվայի «Սպարտակ» ֆուտբոլային ակումբի բոլոր ժամանակների լավագույն ռմբարկու Նիկիտա Սիմոնյանի հուշատախտակն է բացվել «Լուկոյլ Արենա»-ում: Այս մասին հայտնում է ՏԱՍՍ-ը:

Հուշատախտակի բացման արարողությանը ներկա են եղել Սիմոնյանի աղջիկը՝ Վիկտորյա Սիմոնյանը, «Սպարտակ»-ի նախկին գլխավոր մարզիչ Օլեգ Ռոմանցեւը, նախկին ֆուտբոլիստ, Ռուսաստանի վետերան ֆուտբոլիստների միության նախագահ Ալեքսանդր Միրզոյանը:

Նիկիտա Սիմոնյանի աղջիկը «Սպարտակ»-ի թանգարանին է փոխանցել իր հոր՝ Ռուսաստանի աշխատանքի հերոսի պարգեւը, որը նրան շնորհվել էր 2025 թվականի հոկտեմբերի 10-ին:

Հուշատախտակը բացվել է A տրիբունայում, որը կրում է Սիմոնյանի անունը:

ԽՍՀՄ հավաքականի կազմում օլիմպիական չեմպիոն, հայկական ֆուտբոլի լեգենդ Նիկիտա Սիմոնյանը կյանքից հեռացել է նոյեմբերի 23-ին՝ 99 տարեկանում: Հրաժեշտի արարողությունը տեղի է ունեցել նոյեմբերի 27-ին, «Լուկոյլ Արենա»-ում:

Նիկիտա Սիմոնյանը Խորհրդային Միության քառակի չեմպիոն է, Մոսկվայի «Սպարտակ»-ի կազմում երկու անգամ դարձել է ԽՍՀՄ գավաթակիր, Մոսկվայի «Սպարտակ»-ի պատմության լավագույն ռմբարկուն է՝ խփած 160 գոլով: Ն. Սիմոնյանը Խորհրդային Միության հավաքականի հետ դարձել է 1956 թվականի Մելբուռնի Օլիմպիական խաղերի ոսկե մեդալակիր:

Որպես մարզիչ՝ Նիկիտա Սիմոնյանը երեք անգամ դարձել է ԽՍՀՄ չեմպիոն, երեք անգամ էլ հաղթել է ԽՍՀՄ գավաթը:

1992 թվականից նա զբաղեցնում էր Ռուսաստանի ֆուտբոլային միության փոխնախագահի պաշտոնը:

1973 թվականին Նիկիտա Սիմոնյանը՝ որպես Երեւանի «Արարատ»-ի գլխավոր մարզիչ, հաղթել է ԽՍՀՄ առաջնությունն ու գավաթը:

ԱՆԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ

Հայաստանի կանանց բռնցքամարտի հավաքականի անդամ, Եվրոպայի չեմպիոն Անի Հովսեփյանը պրոֆեսիոնալ ռինգում հաջորդ մենամարտը կանցկացնի 2026 թվականի մարտին:

«Արմենպրես»-ի թղթակցի հետ զրույցում այս մասին ասել է բռնցքամարտիկը: Անի Հովսեփյանի հաջորդ մրցակիցը Հարավաֆրիկյան Հանրապետության ներկայացուցիչ Նոցիպիո Բելլն (Nozipho Bell) է: Այդ մենամարտը նույնպես կկայանա Հայաստանում՝ 2026 թվականի մարտին:

«Մեծ է հավանականությունը, որ այդ մենամարտում հաղթելու դեպքում հնարավորություն կստանամ մենամարտելու WBC Silver գոտու համար»,-ավելացրել է Հովսեփյանը:

Անի Հովսեփյանը պրոֆեսիոնալ ռինգում այս պահին կանանց հավաքականի միակ անդամն է ու անկախ Հայաստանի միակ Եվրոպայի չեմպիոնը:

ԺԱՄԱՆՑ

ԱԼԲԵՐՏԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԸ՝ ԵՎՐԱՏԵՍԻԼՅԱՆ ԲԵՄՈՒՄ

Ալբերտ Արմենակյանը Թբիլիսիում է, որտեղ օրեր անց կանցկացվի «Մանկական Եվրատեսիլ 2025» երգի միջազգային մրցույթը: Հայաստանի տասներկուամյա պատվիրակը արդեն կատարել է «Brave Heart»-ը եվրատեսիլյան մեծ բեմում:

Նրա առաջին բեմական փորձի լուսանկարները հրապարակվել են մրցույթի պաշտոնական կայքում: Գրում է BRAVO.am-ը:

Ալբերտի «Brave Heart»-ը YouTub-ում արդեն ունի 1,1 միլիոնից ավելի դիտում:

«Մանկական Եվրատեսիլ»-ն այս տարի կանցկացվի Վրաստանի մայրաքաղաքում՝ դեկտեմբերի տասներեքին՝ «Միավորված երաժշտությամբ» խորագրով:

Հայաստանի պատվիրակ Ալբերտը ելույթ կունենա 5-րդը:

ԵՐԳՉՈՒՀԻ ՇԵՐԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ԻՐ ՀԱՐՍԱՆԻՔԻՆ

79-ամյա փոփ լեգենդ Շերը պլանավորում է երրորդ անգամ ամուսնանալ: Page Six-ի տվյալներով՝նրա սիրելին 39-ամյա երաժշտական պրոդյուսեր Ալեքսանդր «Էյ» Էդվարդսն է:

Հարսանիքը կարող է տեղի ունենալ երգչուհու տարեդարձից առաջ: Ավելին՝ տոնակատարությունը, հավանաբար, կնկարահանվի եւ կներկայացվի աստղի կյանքի մասին առաջիկա վավերագրական սերիալում, որը մշակվում է Netflix-ի կողմից:

Հիշեցնենք, որ Շերի եւ Էդվարդսի սիրո պատմությունը սկսվել է 2022 թվականի նոյեմբերին: Զույգին առաջին անգամ միասին նկատել են Լոս Անջելեսում՝ ձեռք ձեռքի տված: Ընդամենը մի քանի օր անց երգչուհին հրապարակավ հաստատել է իրենց հարաբերությունները սոցիալական ցանցերում՝ իր հետեւորդներին ասելով, որ նրանց կարծիքները իր համար ոչինչ չեն նշանակում:

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՎՃԱՐ ԿԼԻՆԻ

Վրաստանում 2026 ուսումնական տարվանից պետական համալսարաններ ընդունվածներն ուսման վարձ չեն վճարելու. պետությունն ամբողջությամբ կստանձնի ֆինանսավորումը: Այս մասին հայտարարել է Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն՝ ճեպազրույցի ժամանակ: «Մեր կառավարության օրոք նախադպրոցական ինչպես նաեւ ընդհանուր կրթությունը լիովին անվճար է, եւ դրան գումարվում է կրթության երրորդ մակարդակը՝ բարձրագույնը, որը նույնպես անվճար է դառնում: Հաջորդ տարվանից եւ հաջորդող տարիներին կրթությունն անվճար կլինի պետական համալսարաններ ընդունված բոլոր ուսանողների համար: Մեր առաջնահերթություններից է երիտասարդներին աջակցելն ու նրանց ֆինանսական վիճակի բարելավելը», - ասել է Կոբախիձեն:

● Դեկտեմբերի 27-ին՝19:00-ին, Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում տեղի կունենա «Էլֆերի Նոր տարին» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1.500, 2.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով է իրականացվում անվան փոխման պետական գրանցումը:

Անի Ալթունյան (34 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Անվան փոխման պետական գրանցման հիմքերն են՝

- տասնութ տարին լրացած անձն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով փոխելու իր անունը, որը ներառում է անունը, հայրանունը եւ ազգանունը,
- տասնվեցից մինչեւ տասնութ տարեկան անձն իր անվան եւ ազգանվան փոխման պետական գրանցումը կատարում է ծնողների, որդեգրողների կամ խնամակալի գրավոր համաձայնության առկայության դեպքում, իսկ նման համաձայնության բացակայության դեպքում՝ խնամակալության եւ հոգաբարձության մարմնի որոշմամբ՝ բացառությամբ նրա՝ օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ ճանաչվելու դեպքերի,
- տասնվեց տարին չլրացած անձի անվան կամ ազգանվան փոխման պետական գրանցումը կատարվում է ծնողների համատեղ դիմումի հիման վրա, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ խնամակալության եւ հոգաբարձության մարմնի որոշմամբ:

Անվան փոխման պետական գրանցման դիմում կարող է ներկայացվել, եթե՝

1) ծնունդը գրանցվել կամ սույն օրենքով սահմանված կարգով վերականգնվել է ՀՀ ՔԿԱԳ մարմիններում կամ ՀՀ հյուպատոսական հիմնարկներում,

2) ծնունդը գրանցել է օտարերկրյա պետությունը, եւ ՀՀ-ն իրավասու է կատարելու անվան փոխում՝ երկկողմ կամ բազմակողմ միջազգային պայմանագրի հիման վրա:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Դիմումները գործակալություն են ներկայացվում էլեկտրոնային եղանակով կամ սպասարկման կենտրոնների միջոցով:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ինչ պարտավորություն ունի նպատակային ուսուցմամբ ուսանողը:

Ալիսա Մկրտումյան
(43 տարեկան, տնային տնտեսուհի)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ նպատակային ուսուցմամբ ուսանող համարվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար պետությունը երաշխավորում է պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում մրցութային կարգով անվճար բարձրագույն եւ հետբուհական կրթություն ստանալու իրավունք: Այս դեպքում մրցութային ընդունելությունն իրականացվում է ընդհանուր մրցույթից առանձնացված՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված կարգի:

Նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողի հետ կնքված պայմանագրում պարտադիր ամրագրվում է նաեւ հետեւյալ պայմանը. ուսանողը ավարտելուց հետո առնվազն 3 տարի ժամկետով, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, գործուղվում է աշխատելու ուղեգրող կազմակերպության նախատեսած վայրերում:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Այս պայմանը չկատարելու դեպքում շրջանավարտը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով եւ ժամկետներում պարտավոր է փոխհատուցել ուսումնառության տարիների համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրված ուսանողական նպաստի ձեւով ուսման վճարի լրիվ փոխհատուցման չափի եւ պետական կրթաթոշակի չափի հանրագումարի կրկնապատիկը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Հուսանք՝ այս գրությունն իր ցանկալի արդյունքը կթողնի թե՛ երեխայի, թե՛ ծնողի դաստիարակության եւ վարվեցողության վրա:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 2 + 1 + 1 + 5
Կոտայքի լեռներ	- 1 + 1 + 1 + 5
Կոտայքի նախալեռներ	+ 3 + 5 + 6 + 8
Գեղարքունիք	- 2 + 1 + 2 + 5
Լոռի	- 3 + 1 + 4 + 8
Տավուշ	+ 2 + 5 + 8 + 11
Արագածոտնի լեռներ	0 - 3 + 1 + 5
Արագածոտնի նախալեռներ	+ 2 + 5 + 5 + 9

Արարատ	+ 2 + 5 + 6 + 9
Արմավիր	+ 2 + 5 + 8 + 11
Վայոց ձորի լեռներ	- 2 + 1 + 1 + 4
Վայոց ձորի նախալեռներ	+ 3 + 6 + 6 + 9
Սյունիքի նախալեռներ	+ 2 + 5 + 4 + 7
Սյունիքի հովիտներ	+ 5 + 8 + 7 + 10
ԼՂՀ	+ 1 + 4 + 7 + 9
Երեւան	+ 6 - 0 + 7 + 9

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **9.12.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*